

# ՄԻ ԱՆՅԱՅՏ ՏԱՂԱԲԱՆ

3.

## Նրգիծական ոտաճառքներ

Նրգիչ Գանիէնն ո՛չ միայն բարոյա-  
խրատական, սիրոյ, ուրախութեան տաղա-  
բան է, այլև իրանաւայ գրականութեան  
լուսադոյն երգիծաբաններից մէկը: Նրա ու-  
տեղծագործութիւնների մէջ կան երգիծա-  
կան բովանդակութեամբ ոտանաւորներ, ո-  
րոնք թէև թուով շատ չեն, բայց իրենց սը-  
րամիտ երգիծանքով ու կենցաղային բնոյ-  
թով Հետաքրքրական են: Ճիշդ է, այդ տա-  
ղերը չեն շօշափում քաղաքացիան, Հասարա-  
կական խնդիրներ, բայց պատկերում են իր  
ժամանակի կերպարներին ու սուպերի բացա-  
սական գծերը, նրանց թերութիւններն ու  
պակասութիւնները: Այդ տեսակէտից էլ ա-  
ռանձին արժէք ունեն:

Այդ ոտանաւորների էական յատկանիւր  
մեղմ երգիծանքն է եւ սրամիտ Հեգնանքը:  
Այնտեղ տաղաբանը Հումորով գծել է իր  
ժամանակի աչք բռնակալը, վատ, անհամեստ  
պատախի՛ Գուլթարի դիմանկարը, որ ո՛չ մի-  
այն Հարստում է իր Համեստ, առաքինի  
Հարսին, այլև իր ձեռքի սմուք փէտով թա-  
կում է:

«Պատա Գուլթարն իր հարսին  
կը ծայռայէր իր երեսին.  
Ձեռքում ուներ միշտ սմուք փէտ,  
Հայ կը թակեր այդ պատուքը»:

Տան խաղաղ, երջանիկ կեանքում փոր-  
ձանք դարձած պատառն ո՛չ միայն ամէն օր  
Հարսի Հետ «կուտում» է, այլև Հեգնում,  
արհամարհում եւ սնիծում է նոյնիսկ իր  
բարի ու աղին մարդուն, իսկ անմեղ, պայ-  
ծատ ու անուշ երեսխաներին ծեծում:

«Մարգի անումն էր Յարսիւն,  
Կատը միշտ. Թո՛ւ չեք պէս մարդուն»:

Ո՛չ հում լինես ո՛չ էլ գարբում-  
Միշտ բողբոջ էր պատուքը»:

Տաղաբանը պատառի բերնով ծաղրում,  
ըննադատում եւ նախատում է նաեւ ժամա-  
տակի խաւարի եւ տղիտութեան մէջ խար-  
խափող աչճաղանդ, ապերախտ տղաների,  
անհամեստ, «լրբադած» աղջիկներին, անող-  
նիւ ու աներես Հարսների եւ Նրանց մայ-  
րերի կենցաղային յոռի, պակասուող, թերի  
կողմերի՝ առաքինի Հումորիստական երան-  
դաւորումներով:

«Մեծ տղաք էի չի ամենում,  
Հարսն էլ էի միշտ իմն շանջում.  
Ի՛նչ երեսնա կայնում ինչում,  
Կանքը ցանգատ էր պատուքը»:

Աղջկերէյ էի լրբացել եմ,  
Երեսները ողջի սօս բացել եմ,  
Ճիշդ կարծես վայրենացել եմ.  
Կը կընկըսայ վատ պատուքը»:

Իմ չափ խրատում, զնայ բերնի համը,  
Լեռնիքի էս մեր հարսի ծամը.  
Կըսեմք մրա սպիտակ ծամը,  
Որ չը ծըռի հարսնա պատուքը»:

Միշտ հարսնա կը խրատ,  
Թէ կերպոյք դու միշտ ատէ.  
Պակուածն տես ինչ վատ է,  
Այդպէս առնով էր պատուքը»:

Տաղաբանը զուգուցանում տողերով պատ-  
կերում է պատառի բարոյական սայթաքում-  
ները: Նա փոխանակ իր ընտանեկան  
կեանքի վեհութիւնը բարձր պահելու, իր  
զէխ եւ անփայլել կենցաղով նսեմացնում է

իր անունն ու պատիւը: Երգիչը սուր երգի-  
ծանքով էլ որովհետ տողերով զձեզ է նաեւ  
էտաւ: Ժենամիտ պատուի սիրականներէ՝  
Հախփէրգի, Ղազարի, Ակոփենց Մանուկի,  
Սուքիաս Ծառուկի եւ իր Հողեւոր կոչման  
վեհուօթիւնն արտատարող, վատասվաբ Տէր  
Մարութ քահանայի դիմանկարները, որոնց  
սրտանց սիրելի է փառասէր չար պատար: Ահա նրա վկայութիւնը:

«Շատ կը սիրեիմ իմ քանիւնք,  
Երանի էր այդ վայելումներ-  
Հարիւրներով ունէի ընկերներ,  
Անձնիմ էի սիրելի, կ'աւեր պատար:

Տէր Մարութք էի իմ էր սիրում,  
Հախփէրգի էլ էի մասնակ գրում.  
Ղազարն էլ էի մեր բազը քրում,  
Անէն իմ խաբար, կ'աւեր պատար:

Հիմա յումնեմ ինչ դար ու զին,  
Կը յիշեմ Ակոփենց Մանուկին.  
Կամ թէ Սուքիաս ա Մառուկին,  
Որքան կը սիրեիմ իմ, կ'աւեր պատար:

Այսպէս է դանդաղաբար նահապետական  
մարտը, անարատ Հայ, օջախին պատիւ չըն-  
րող, ընտանեկան սրբութիւնները, արհա-  
մաբհող, բարոյսպէս ընկած, անազնիւ, աբ-  
յաւերուած ու փառասէր պառուք, որ ճառ-  
նում է մարդու Հողին» եւ անվերջ հանդիստ  
չի տալիս:

«Կ'աւեր. իմ պէս մի խանութ-խաբար  
Ձի էլի զամբ էի պէս մարդում.  
Ես Գուլիմար, զու՛ Արբում,  
Վաս ըզբալով եմ կ'աւեր պատար»:

Տաղարանը Հոմարի միջոցով ծաղրի է  
էնթարկել նաեւ ժամանակի տնաքանդ կա-  
նոնց: «Փահլուլին ստում ին՝ կին առ» ու-  
տանաւորի մէջ որոշ քառեակներ երգիծա-  
կան երանդաւորում ունեն, սակայն Հիմնա-  
կանում քննադատում է եւ դատապարտում  
առն շահամոլ, ապահ ու տնաւեր կանանց,  
որոնք իրենց օպիտութեամբ խորանկում են  
ընտանեկան երջանութեանը ներքայնակու-  
թիւնը: Իրա լաւագոյն օրինակը բարի, ի-  
մասաւան աւ խելացի Փահլուլի կեանքի պատ-

մութիւնն է: Շատերը նրան խորհուրդ են  
տալիս պահուել, որովհետեւ դա մարգա-  
րէ՛ր էրի սահմանած կանոնն է եւ սուրբ գրքի  
պատուէրք:

«Միմ օր եկամ ախիմ. Փախոյ՛լ,  
Գու յսլեմով ես, բա ինչու՛ ես թուլ.  
Պատմում ի՞նչ է, կիմ չես աւում,  
Անց ես կացումս օրերդ զուր:

Հասակդ անց է բառատմից,  
Շահածդ ի՞նչ է այն աշխարհից.  
Վատնիլ ես քո բոլոր կեանքդ,  
Չունես զուսկ ու կոպկից»:

Սակայն, Հեռատես ու խելօք Փահլուլն  
գիտէ, որ ամուսնութիւնը մի վեճ եւ սրբա-  
յաջ պարտականութիւն է, իսկ պահուելու  
եւ կնոջն երջանկացնելու համար անհրա-  
ժեշտ է նախ՝ տուն ունենալ եւ ճարտը կայ-  
քը՝ պատրաստել, ուստի միանգամայն ճիշդ  
հասկացողութեամբ տրամաբանում է.

«Միմնե որ ես տամ շինեմ.  
Բոլոր կայք կարգի դնեմ,  
Էմ ժամանակ ես լուր կը տամ.  
Որ կիմ տննել կ'ընդունեմ»:

Մարդիկ շատ ճիշդ են: Կոնում Փահլուլի  
խօսքերի էութիւնը եւ նրան, Հարուն Ռա-  
չիզի օգնութեամբ, տալիս են անհրաժեշտ  
ծախքերի ոսկեղբարձ: Բայց նա ճարտարա-  
պետական շատ տարօրինակ ձևով ու ոճով  
տուն է պատրաստել տալիս:

«Ինչպէս էր մա տուն պատրաստել,  
Առատակմ քաշ, յատակմ վեր.  
...Տան առատակ մերեւ բերաւ  
Ու յատակը կտուրք տարաւ.  
Բոլոր տունը քարաշինեց,  
Շինարարութիւնից զաղարաւ»:

Շուտով Փահլուլի մօտ է գալիս իր թան-  
կարէն բարեկամ Հարուն Ռաչիզի եւ տեա-  
նում շինարարական արուեստի այլանդակ  
ոճով կառուցուած տան պատկերը: Նա սառ-  
տիկ դալարացած յանդիմանում է Փահլուլին:

ե՞րն է քաղաքի, սաս Ռաշիդ,  
Շալա տեսնեմ քերթուի կաշիդ .  
Ամբողջ վատնեցիր փողերը,  
Ամենը բճուճ էմ դուռ ու բաշիդ .

**Փահլուլը, սակաֆն, կատարևալ համբ-  
րուժևամբ եւ սեղմ հումորով պատասխա-  
նում է .**

«Փահլուլն սասու Ռաշիդ եղբայր,  
Համբերութեամբ պատասխամ սու .  
Այսպիսի տուն ինձ է հարկաւոր,  
Զէ՞ որ սեսլ ես ինձ դու՛ կին առ :

Այն կինն, որ ինձ է գալու,  
Զէ՞ որ տունն է նա շրջելու .  
Ինչ որ ուզի, ինչքան շրջի,  
Տանս հե՛մն է նա շխտկելու :

Այն ժամանակ միշտը կը լինի .  
Ու ամենից հեշտ կը լինի .  
Կինն ամուս տունը տակն ու վեր,  
Ռաշիդ եղբայր, վիշտ մի՛ լինի :

**Տաղարան Դանիելը Հայ երջանիկ ընտա-  
նի ճեմերի քայքայման հիմնական պատճառն  
ուսումնասիրելով եկել է այն եղբակացու-  
թեան, որ դրա համար պատասխանատու են  
եւ յանցաւոր թէ՛ ամուսինը եւ թէ՛ կինը :**  
Նա գտնում է, որ նրանք իրենց հեղինակու-  
թիւնը չպէտք է չարաչար դործածեն, այլ ի-  
րար հասկանախ, եւ իրենց սրտում ներու-  
զամտութեան, իրար օգնութեան ու փոխա-  
դարձ սիրոյ ու յարգանքի դիտակցութիւնը  
զարգացնեն : Այդ տեսակէտից ուշադրաւ է  
«Լըզրի» գործարար խորագրով ոտանա-  
ւորը, ուր աջորը լեզու է առնում եւ սրա-  
միտ պատկերացումներով ու համեմատու-  
թիւններով զննադատում է թէ՛ ամուսնու  
եւ թէ՛ կնոջ թերի, բացասական յատկու-  
թիւնները, նրանց անմտութիւնը, անհա-  
զանդութիւնը, անազնուութիւնը, թեթեւու-  
թիւնը, ցուցամոլութիւնը եւ խարէութիւնը .

«Լըզրն» սասու . Զարմանում եմ մարկանցէն,  
Թէ ի՞նչ տեսակ այս օրերին կեանք կ'անցնեն .  
Շատ կը վախենամ իւրեանց կեանցէն,  
Պատիւ երբէ՛ք բոլորով չամանչեն :

Մարդ եւ կին միշտ կուտն են,  
Ուզիդ ճանապարհից միշտ ծաւում են .

Կործես ցիտ ու սղլի մէջ փուլում են,  
Հայ տանգոմէի եւ չարչարմէի մէջ են :

Ազամորդի է՛ք, խելից հարուստ,  
Հշուրիսնէ կը տո՛ք փախուստ .  
Կ'ըմի ձեզի այդպէս այրուստ,  
Ռո՛ւստ կամայ՛ք չերկնչեն :

Իրես կը տա՛ք դու՛ք ձեր կամանց,  
Որովհետեւ չունէ՛ք սէր ուսմանց,  
Խրտուէ՛ք դու՛ք լուրջ՝ ձեր կամանց,  
Որ գիտակցաբար ձեզ ճամայչեն :

Բաց է՛ք թողնում իրանց բէ՛փին,  
Պատրաստում են քէ՛յն ու կո՛փին,  
Հագուստները նոր են, չունեն մէկ հի՛ն,  
Կրծքերը բաց են, բնաւ չամանչեն :

Ուր որ կ'ուզեն կը յամայնեն,  
Կամէից ազատ շատ ամկախ են .  
Ուղիդ չգտան, ամբողջ ձայն են,  
Միշտ օտարին իրենց կը կանչեն :

Դանսի(պարի) մէջն միշտ հազիր են,  
Զպարէն նրանց հետ, որ գազիր են .  
Ողբ ամկախի կեանք կը իրեն,  
Հայրաք չկայ, որ խանձ՝ խնչին :

Ինձ՝ ախորժու, դու՛ք մէկ մայրէ՛ք,  
Կառավարեմ տա՛մ հաւ, ստան վառէ՛ք .  
Գոնեայ ինձնից աւտում սառէ՛ք,  
Կին պանիկ մի մեծ բո՛ւ չէ՛ք :

**Ժողովրդասէր տաղարանը երգիծարանի  
նրբին երանգաւորումներով պատկերել է  
նաեւ բնաւորութեամբ տարբեր գծերով եւ  
առանձնաշատուկ նկարագրով օժտուած  
մարդկանց էական յատկանիշ՝ երբ : Այդ ո-  
տանաւորով երգէ՛լը դժել է գլխաւորապէս  
հասարակական կերպարներ թէ՛ դրակա՛ն եւ  
թէ՛ բացասական արժանիք՝երն այսպիսի  
ընդունումներով .**

Մարդ կայ իր ազգին է պարծանք,  
Մարդ կայ ազգին խիտ ամբօքանք .  
Մարդ կայ կը վերացնի ազգի վտանգ,  
Մարդ կայ մտանիչ, ո՛նց Յուդա :

**Տաղարանն իր ճանադատական շեշտը  
դ՛ում է գլխաւորապէս մարդկանց արատ-**

ների ու պակասութիւնների վրայ, մերկացնելով նրանց մտաւոր անկարողութիւնը, ակարամտութիւնը, դատարկամտութիւն՝ ր եւ մեծամտութիւնը:

Մարդ կայ յիմար-յիմար միշտ խօսում է. Մարդ կայ յիմարի մարմնոյն փստօսում է. Մարդ կայ եայվամ, մարդկային կերպարամբով. Դքս խօսումսքը իրեն կը վկայէ:

Այս տողերը վկայում են, որ Դանիէլը Հմուտ Հոգեբան է. նա կարողացել է շատ լաւ թափանցել իր ժամանակի մարդկանց

Հոգիների մէջ եւ Հմուտ գրչով պատկերել նրանց բնատրութեան, խառնուածքի էական ու յատկանշական գծերը: Իր երգիծական որոշ քառեանիներով նա ծաղրում է ու քննադատում նաեւ մարդկանց ծայրայեղ դրամատիքութիւնը, շահամոլութիւնը, ազահութիւնը, վնասմոլութիւնը, շարագործութիւնը, իսկ այլ քառեանիներով Հեզնանքի եւ ծաղրի ենթարկում փողաւոր այն տղէտ, անարժան Հարուստներին, որոնք կեղծ ազգասէր են եւ ազգից մնում են զհեռու ու բաժանել:

4.

Սիրոյ տաղեր

Տաղարան Դանիէլի գրական ժառանգութեան մէջ ուշագրաւ տեղ են գրաւում սիրոյ տաղերը, որոնց նիւթն երգչի Հոգեկան ապրումներն են, նրա քնարակա՛ յոյզերը, խոհերն ու տրամադրութիւնները: Այդ ոտանաւորները գրաւիչ են իրենց անպաճոյճ պարզութեամբ, սահունութեամբ եւ արեւելեան ճոխ պատկերաւորութեամբ: Հական զծեր, որոնք կազմում են նրա տաղերի հիմնական յատկանշանքը եւ առանձին երամոյց են տալիս նրա բանաստեղծական արուեստին:

Այդ տաղերը ցայտուն գաղափար են տալիս ո՛չ միայն Դանիէլի գրական ճաշակի եւ կառուցողական արուեստի էութեան, մասին, այլեւ վկայում են որ նա եղել է իր ժամանակի սիրոյ երգիչներից մէկը: Ճիշդ է, այդ սիրերգները նորութիւններ չեն եւ չունեն տաղանդաւոր սերունդներ՝ Յովհաննէս Թլկուրանցու, Գրիգորիս Աղթամարցու, Կասեղան Քուչակի, ո՛չ էլ Նշանաւոր բանաստեղծ-նկարիչ Կաղաշ Յովնաթանի տաղերի լիրիկական խորութիւնն ու գեղարուեստական շեղութիւնը, բայց տաղասաց Դանիէլը եւս ինքնուրոյն ձեւով է արտայայտել իր գրական յոյզերն ու խոհերը, որոնք ապրած ու վայելած սիրոյ պատկերացումներ են:

Տաղարանն ունի իր սրտի սիրած եարբ, որ իր գեղեցիկ յատկութիւններով նրա Հա-

մար մի պաշտելի էակ է, միաժամանակ նրա կեանքի երջանկութեան էական մասը: Եւ նա վառ գոյներով եւ արեւելեան բեղուն Համեմատութիւններով նկարել է իր ճեղքելի, ճաղիղ՝ եարի գեղեցիկ պատկերն ու Հոգեկան բարեմամտութիւնները, միաժամանակ դժել է իր սիրալին անկեղծ, խոր ապրումներն այսպիսի տողերով:

Երբոր տեսայ սիրակամս, սրտն իփեց կայծակի պէս, Տեսէր փայլում ու զնդեցիկ, կիցատուտ արեգակի պէս. Էնքան անուշ, շատ հառաււտ ըստք ու խունկի պէս, Շատ փափուկ ու համիլի նոյն դրախտի անունի պէս Կոկոնի է. սիրում բացուել, տամ հնգեմա յայտնակի պէս.

Սիրամ է մաւուր ու շատ վնուտ, դրախտային վտակի պէս:

Բոլոր աշխարհի սիրունների քաղաւիքն ես, Յագելի՛. Էմ պատմական արամքը հիմ, որ կը պատմեն, դու ես, Յագելի՛, Ինչ որ արծի երկրագունդը սրայնակ, ճորս գիմն ես, Յագելի՛, Զունեա հաստօք թո մտմ, դու բարձր գահիմ ես, Յագելի՛, Դու ես պատճառ կննդանուրեան, ի՛յ հագիմ ես, Յագելի՛:

ԱՐԱՄ ԵՐԵՄԻԱՆ

Փետիլիվի (Շար. 3)